

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Զ. Տարի, Թիւ 253, Ուրբաթ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2014

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ Կ'ԱՅՑԵԼԷ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ



Կիրակի, 12 Հոկտեմբերի երեկոյեան, Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Մասիս Ծ. Կրդ. Զօպուեան, Ազգային Առաջնորդարանի իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը Հնդկաստանի Ուղղափառ Եկեղեցոյ Կաթողիկոսին Քուէթի մօտ պատուիրակ՝ Իսահակ Արք. Օսթադէոսը: Արքեպիսկոպոսը եկած էր անձնապէս շնորհակալութիւն յայտնելու Քուէթի մօտ իրենց համայնքի պատարագները Քուէթի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ մատուցանելու ամսական դրութեամբ արտօնութեան համար:

Հայր Սուրբը յանուն ազգային վարչութեան ու թեմի ժողովականութեան բարի գալուստ մաղթեց Արքեպիսկոպոսին եւ յաջողութիւն մաղթեց անոր իր առաքելութեան մէջ: Կաթողիկոսական Փոխանորդն ու Մալապար Եկեղեցոյ Հոգեւոր պետին ներկայացուցիչը անդրադաձան երկու եկեղեցիներու պատմական սերտ յարաբերութիւններու գոյութեան: Անոնք նաեւ յիշեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատմական այցելութիւնը Հնդկաստան ,որ տեղի ունեցած էր 2010 թուականին: Հանդիպման ներկայ գտնուեցան գաղութիս հոգեւոր հովիւ Տ. Արտակ Քինյ. Քէհեաեան եւ Հնդիկ Ուղղափառ Եկեղեցոյ Քուէթի հոգեւոր հովիւը:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Կիրակի, 12 Հոկտեմբերի երեկոյեան Ազգային Առաջնորդարան այցելեցին Քուէյթի ազգային վարժարանի հոգաբարձութեան անդամները եւ ընդունուեցան Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Ս. Մասիս Ծ. Վրդ. Զօպուեանին կողմէ: Հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Սունիր Դարբինեան անրադարձաւ Ազգային Վարժարանի աշխատանքներուն եւ ապագայ ծրագիրներուն: Հանդիպման ներկայ գտնուեցաւ նաեւ վարժարանի տնօրէն՝ Տիար Մանուկ Մանուկեան, որ իր կարգին զեկուցեց վարժարանի վերաբացման ու գործունէութեան մասին: Հայր Սուրբը ողջունելէ ետք հոգաբարձութեան անդամները, նախ գնահատեց անոնց աշխատանքը, ապա անդրադարձաւ Ազգային Վարժարանի իւրայատուկի առաքելութեան, սերունդներու հայեցի դաստիարակութեան սրբազան առաքելութեան ու կոչումին: Հայր Սուրբը այս առթիւ գնահատեց նաեւ Վարժարանի տնօրէնութեան, ուսուցչական կամգին ու պաշտօնէութեան նուիրական աշխատանքը:



ՄՐՔՈՑ ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 14 Հոկտեմբեր 2014ին, Քուէյթի Ազգային Վարժարանի շրջափակէն ներս նշուեցաւ Թարգմանչաց տօնը, ինչպէս նաեւ տեղի ունեցաւ վարժարանի պաշտօնական բացման հանդիսաւոր արարողութիւնը, ներկայութեամբ՝ Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Տէր Մասիս Ծ. վրդ. Զօպուեանի, Արժ. Տ. Արտակ քինյ. Քէհեաեանի, ազգային մարմիններու ներկայացուցիչներու, վարժարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան, ուսուցչաց կազմին եւ աշակերտութեան:



Բացման խօսքը արտասանեց 12րդ կարգի աշակերտներէն Յուլեր Գալաճեան, որուն յաջորդեց գեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ նախակրթարանի աշակերտներու մատուցմամբ: Այնուհետեւ խօսք առաւ վարժարանի տնօրէն Պրն. Մանուկ Մանուկեան, անդրադառնալով թարգմանչաց շարժումին եւ անոր խաղցած կարեւոր դերին՝ հայ մշակոյթի զարգացման եւ ծաղկման համար:

Հուսկ՝ իր հայրական օրհնութիւնը փոխանցեց թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերայ. Ս. Մասիս Ծ. Վրդ. Զօպուեան, որ վեր առաւ հայ վարժարանին նշանակալից դերը հայեցի դաստիարակութեան եւ հայապահպանման սրբազան առաքելութեան մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ

Նախագահ Սարգսեան Ընդունեց Չինաստանի Դեսպանը

Նախագահ Սերժ Սարգսեան Չորեքշաբթի օր ընդունեց Չինաստանի դեսպան Թիան Չանչունը՝ Հայաստանի մէջ դիւանագիտական առաքելութիւնը աւարտելուն առիթով: Նախագահը շնորհակալութիւն յայտնեց դեսպանին՝ պաշտօնավարութեան տարիներուն հայ-չինական յարաբերութիւններու ամրապնդման ուղղուած արդիւնաւէտ գործունէութեան համար, ընդգծելով, որ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները կը գտնուին բարձր մակարդակի վրայ, յատկապէս վերջին տարիներուն փոխշահաւէտ շարք մը մարզերու մէջ զգալիօրէն աշխուժացած է հայ-չինական համագործակցութիւնը, յաճախակի դարձած են տարբեր մակարդակի փոխադարձ այցելութիւնները, ընդլայնուած է իրաւապայմանագրային դաշտը, առեւտրական շրջանառութեան ծաւալներուն մէջ արձանագրուած է որոշակի յառաջընթաց:

Այդ բոլորին մէջ Սերժ Սարգսեան մեծապէս կարեւոր նկատեց դեսպան Թիան Չանչունին անձնական ներդրումը:

Դեսպան Չանչուն շնորհակալութիւն յայտնեց հանրապետութեան նախագահին՝ գնահատանքին եւ ջերմ խօսքերուն համար եւ նշեց, որ Հայաստանի մէջ իր դիւանագիտական առաքելութիւնը իրականացուցած է մեծագոյն հաճոյքով եւ կը հեռանայ լաւագոյն տպաւորութիւններով՝ մնալով հայ ժողովուրդին եւ Հայաստանի բարեկամը:

Հանդիպում՝ ՀՅԴ-ի Ներկայացուցիչներու Եւ Վրաստանի Դեսպանին Միջեւ

ՀՅԴ մամուլի դիւանը կը հաղորդէ, որ ՀՅԴ «Քրիստափոր Միքայէլեան» կեդրոնին մէջ Չորեքշաբթի օր տեղի ունեցաւ հանդիպում՝ ՀՅԴ-ի ներկայացուցիչներու եւ Հայաստանի մէջ Վրաստանի դեսպան Թենկիզ Շարմանաշվիլիի միջեւ:

Տեսակցութեան ընթացքին հիւրընկալող կողմէն ներկայ էին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ Դաւիթ Լոքեան, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամ Արծուիկ Մինասեան:

Հանդիպումին ընթացքին կողմերը անդրադարձան Հայաստանի եւ Վրաստանի հանրապետութիւններու փոխյարաբերութիւններուն, երկու երկիրներու ընդհանուր շահերուն եւ մտահոգութիւններուն:

Միասնական տեսակէտ արտայայտուեցաւ այն մասին, որ ներկայ աշխարհաքաղաքական զարգացումներուն ծիրին մէջ առաւել չափով կարեւոր կը նկատուի եղբայրական երկու ժողովուրդներու սերտ համագործակցութիւնը: Շեշտուեցաւ, որ երկու երկիրներուն միջեւ բնական ու անհրաժեշտ համագործակցութիւնը կրնայ ապագայի առումով լայն հորիզոններ բանալ դրացի երկիրներուն համար:

Կողմերը նաեւ անդրադարձան վրացահայութեան խնդիրներուն, անհրաժեշտ նկատուեցաւ քննարկել եւ միասնաբար լուծումներ գտնել առկայ եւ ծագող հիմնահարցերուն: Կողմերը հաստատեցին նման հաղորդակցութիւնները շարունակական դարձնելու անհրաժեշտութիւնը:

Արցախի Վարչապետը Ընդունեց Սփիւռքահայ Բարերարներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ Արա Յարութիւնեան Չորեքշաբթի օր ընդունեց «Հանգանակ» հասարակական կազմակերպութեան խորհուրդի սփիւռքահայ անդամները եւ հովանաւորները:

Վարչապետը, շնորհաւորելով հիւրերը՝ կազմակերպութեան տասնամեակին առիթով, ողջունեց Արցախի մէջ անոնց կողմէ իրականացուող ծրագիրները, կարելոք նկատելով տարեցներու խնամքին վրայ սեւեռուած ուշադրութիւնը:

Յարութիւնեան անդրադարձաւ կառավարութեան որդեգրած ընկերային քաղաքականութեան եւ ընդգծեց հասարակական կազմակերպութիւններու կարելոք դերը աստոր արդիւնաւէտ կեանքի կոչման գործին մէջ:

Հիւրերը ներկայացուցին կազմակերպութեան կատարած աշխատանքները եւ յառաջիկայ ծրագիրները: Վարչապետը իր պատրաստակամութիւնը յայտնեց աջակցելու ընկերային մարզի կարելոք նախագիծերու իրականացման:

Նալբանդեան Ընդունեց Տուրնիէն

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան Չորեքշաբթի օր ընդունեց Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան Եւրոպայի գլխաւոր բաժանմունքի պետ Էրիք Տուրնիէն, որ Հայաստան կը գտնուի արտաքին գործոց նախարարութիւններու միջեւ տեղի ունեցող խորհրդակցութիւններուն մասնակցելու նպատակով:

Տեսակցութեան ընթացքին Նալբանդեան ընդգծեց, որ հայ-ֆրանսական յարաբերութիւններուն մէջ գոյութիւն ունեցող բարձր մակարդակն ու բազմապատկուած հաղորդակցութիւնները նպաստաւոր դաշտ կը ստեղծեն երկու երկիրներուն միջեւ բազմաբնոյթ համագործակցութեան առաւել ամրապնդման եւ ընդլայնման համար:

Ձրուցակիցները նաեւ անդրադարձան երկկողմանի յարաբերութիւններու զարգացման առնչուող հարցերու, միջազգային կազմակերպութիւններուն մէջ փոխադարձ գործակցութեան, միտքեր փոխանակեցին միջազգային եւ շրջանային հրատապ խնդիրներու շուրջ, քննարկեցին Հայաստան-Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները եւ այդ ձեւաչափով ընթացող համագործակցութիւնը:

Ղարաբաղեան տագնապի խաղաղ լուծման հոլովոյթին շուրջ քննարկումներու ընթացքին, նախարար Նալբանդեան կարելոք նկատեց Ֆրանսայի, ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ միւս երկիրներու՝ Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու միասնական ջանքերը՝ ուղղուած տագնապի բացառապէս խաղաղ լուծման: Այս ծիրին մէջ կողմերը անդրադարձան հոկտեմբեր ամսուան աւարտին Ֆրանսայի նախագահին նախաձեռնութեամբ Փարիզի մէջ նախատեսուած Հայաստանի եւ Ազրպէյճանի ղեկավարներու հանդիպման նախապատրաստական աշխատանքներուն:

WWW.AZTARAR.COM

Անգարայի Քաղաքապետը Քիւրտ Անուան Տակ Ծայտուած Հայերը Մեղադրած Է Անկարգութիւններ Հրահրելու Համար

«Տեմոքրատ Հապեր» կայքը կը հաղորդէ, որ Անգարայի քաղաքապետ Մելիհ Կէօքչէք «Թուիթթըր» ընկերային ցանցի իր հաշիւին վրայ կատարած հակահայկական գրառումին համար «Թուիթթըր»-ի օգտատէրերու քննադատութեանց թիրախ դարձած է:

Քաղաքապետը գրած է. «Քիւրտերու անուան տակ ՔԱԿ-ի կազմին մէջ անաստուած (աթէիստ) արմատներով հայեր կան, որոնք դէմ են քրտական հարցի լուծման»:

Վերջին օրերուն Թուրքիոյ մէջ անկարգութիւններ տեղի ունեցած էին: Քիւրտերը Թուրքիան կը մեղադրեն Արաբունարի մէջ քիւրտերու ցեղասպանութիւնը չկանխարգիլելու համար:

«Արեւելքի մէջ միասնականութիւնը կանգուն պահելու երազով ապրող մեր քիւրտ եղբայրները կ'ողջունեն, սակայն Արեւելքի մէջ քիւրտի անուան տակ անաստուած հայեր կան», գրած է քաղաքապետը՝ միաժամանակ հայրենիքին հաւատարիմ հայ եղբայրներուն շնորհակալութիւն յայտնելով:

Իբրեւ ապացոյց՝ Անգարայի քաղաքապետը հրապարակած է տեսանիւթ մը, ուր Քրտական աշխատաւորական կուսակցութեան որոշ զինեալներ կը նմանակեն նամազը, իսկ միւսները՝ կը ծիծաղին:

Քաղաքապետին այս խօսքերը լայն արձագանգ գտած են ընկերային ցանցերուն վրայ, եւ շատերը զինք մեղադրած են հայերու նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորելու եւ ցեղապաշտութեան համար:

Սպիտակ Տունը Պիտի Ցուցադրէ Հայ Որբերու Գորգը



«Լոս Անճելըս Թայմզ» կը գրէ, որ Սպիտակ տունը չորեքշաբթի օր հաստատած է նախապէս տարածուած այն տեղեկութիւնը, թէ Հայոց ցեղասպանութեան առնչուած պատմական գորգը ցուցադրման քանի մը ձախողած փորձերէ ետք նոյեմբերին պիտի ցուցադրուի Սպիտակ տան այցելուներու կեդրոնին մէջ:

Նախապէս Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը հաղորդած էր, որ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի

վարչակազմին մօտ կանգնած աղբիւրները կը հաղորդեն, որ Քոնկրետի եւ ամերիկահայ համայնքին կողմէ ամիսներ տեսած ճնշումներէ ետք Սպիտակ տունը կը պատրաստուի ցուցադրել հայ որբերու գորգը:

11,7×18,5 չափերով գորգը կը պարունակէ աւելի քան 4000000 ձեռագործ հանգոյցներ, որոնք 10 ամսուան մէջ գործած են Լիբանանի Ղազիրի որբանոցի հայ աղջիկները: Գորգը նուիրուած է նախագահ Քելվին Քուլիճին՝ 1920-ական թուականներուն, ի նշան Միացեալ Նահանգներու ցուցաբերած մարդասիրական աջակցութեան նկատմամբ հայերու երախտագիտութեան, ինչ որ

փաստուած է նաեւ լուսանկարով: Քուլիճ ընդգծած է. «Գորգը իր պատուաւոր տեղը ունի Սպիտակ տան մէջ, ուր անհիկա պիտի խորհրդանշէ բարի կամքի ամենօրեայ դրսեւորումը երկրի վրայ»:

Ցուցադրութեան մասին յայտարարութեան մէջ Միացեալ Նահանգներու Ազգային անվտանգութեան խորհուրդի բանբեր Պետնատեթ Միհրն ըսած է. «Գորգը Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու ժողովուրդներուն միջեւ սերտ յարաբերութիւններուն մասին կը յիշեցնէ»:

2013-ին Սպիտակ տունը արգելակած էր Սմիթսոնեան հիմնարկին մէջ գորգը ցուցադրելու նախագիծը: Ամերիկահայ ղեկավարներ եւ շարք մը ծերակուտականներ առարկած էին այդ որոշումին՝ ըսելով, որ Սպիտակ տունը կ'ենթարկուի Թուրքիոյ կառավարութեան քաղաքական ճնշումներուն:

«Լոս Անճելըս Թայմզ» կը նշէ, որ ամերիկահայ համայնքը ողջունած է գորգը ցուցադրելու որոշումը: «Ես յուզուած եմ, որ անհիկա շուտով ցուցադրութեան պիտի դրուի», ըսած է քննրեսական Էտրմ Շիֆ՝ աւելցնելով, որ ինք պիտի շարունակէ պնդել Հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման հարցին վրայ՝ յատկապէս ցեղասպանութեան 100-ամեակի լոյսին տակ:

Մրցանակ՝ Արցախի Նախագահին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան պիտի արժանանայ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի Արեւելեան ափի գրասենեակի պատույ «Ազատութեան մրցանակին»:



Մրցանակը Արցախի նախագահին կը շնորհուի 2 նոյեմբերին տեղի ունենալիք տարեկան ընդունելութեան ընթացքին:

«Մենք խորապէս շնորհակալ ենք նախագահ Սահակեանին Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան հարցին մէջ իր շարունակական նուիրումներուն համար՝ երաշխաւորելով շրջանի աննախընթաց զարգացումը եւ վարելով

այնպիսի քաղաքականութիւն, որ անցեալ տասնամեակներուն համաշխարհային քարտեսին վրայ ձեւաւորեց Արցախը՝ իբրեւ ժողովրդավարական սկզբունքներու վրայ հիմնուած խաղաղասէր հասարակութիւն», ըսած է Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի Արեւելեան ափի գրասենեակի նախագահ Նորա Յովսէփեան:

Ընդունելութեան ընթացքին նաեւ «Մարդասիրական մրցանակ» պիտի շնորհուի Մերձաւոր Արեւելքի հիմնադրամին՝ Հայոց ցեղասպանութեան տարիներուն հայ ժողովուրդին ցուցաբերած աջակցութեան եւ վերահաս ոչնչացումէ հարիւր հազարաւոր հայեր փրկելու համար:

Փոխվարչապետ Արմեն Գեորգեան Հրաժարական Ներկայացուց

17 տարի պետական համակարգին մեջ աշխատած, վարչապետի օգնականին տարածքային կառավարման նախարար եւ փոխվարչապետ դարձած Արմեն Գեորգեան Չորեքշաբթի օր աշխատանքին ազատ կացուցուելու դիմում ներկայացուց:



Կառավարության Չորեքշաբթի օրուան ժողովին ընթացքին այս մասին յայտնելով՝ վարչապետ Յովիկ Աբրահամեան ըսաւ, որ Գեորգեան իր ասպարեզը պիտի շարունակէ սեփական մարզին մէջ:

«Ազատութիւն» ձայնասփիւռի կայանը կը տեղեկացնէ, որ Ս. Փեթերսպուրկի Պետական ծառայութեան հիմնարկի շրջանաւարտ, Թվենթի համալսարանի (Հոլանտա) մագիստրոս Արմեն Գեորգեանի աշխատանքային ասպարեզը ծաղկում ապրեցաւ Ռոպերթ Քոչարեանի օրերուն: Վարչապետ Քոչարեանի օգնականին 24-ամեայ Գեորգեան դարձաւ երկրի նախագահի օգնական եւ աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ, իսկ 2006-էն մինչեւ Քոչարեանի նախագահութեան երկրորդ ժամկետի աւարտը՝ նախագահի աշխատակազմի ղեկավար: Այս ընթացքին երկու ամիս ան եղած է Ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղարը:

Հակառակ անոր որ Գեորգեան իր ասպարեզի գագաթնակետին հասաւ նախագահ Սերժ Սարգսեանի օրերուն՝ 2008-էն մինչեւ հրաժարականը տարածքային կառավարման նախարարն էր եւ փոխվարչապետը, անոր ազդեցութեան մասին հիւսուած առասպելներն ու կիսաառասպելական պատմութիւնները կը վերաբերին Քոչարեանի նախագահութեան տարիներուն: 1990-ականներու վերջաւորութեան եւ 2000-ականներու սկզբնաւորութեան մամուլը զայն կը բնորոշէր իբրեւ Քոչարեանի ամենէն վստահելի մարդը: Ե՛ւ համաձայնական դաշինքի, ե՛ւ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան կազմած կառավարութիւններուն մէջ Գեորգեան յաջողեցաւ անկուսակցական մնալ:

Ըստ նոյն աղբիւրին, Գեորգեան շատ հաւանաբար աշխատանքի անցնի արտերկրի մէջ:

www.armenianprelacykw.org

ԱՆՆՄԱՆԱՐԶ

Սահմանադրական Բարեփոխումները Նախադրու «Թէ Թէ»-ի Իրականացման

Հայաստանի Հանրապետութեան՝ Եւրասիական տնտեսական միութեան (ԵՏՄ) անդամակցութեան գործընթացի իրաւական սկիզբը, գրաւած է եղելոյթին հետեւողներուն ուշադրութեան կեդրոնը եւ ողողած հայկական լրատուադաշտը տարաբնոյթ մեկնաբանութիւններով:

Անկախ այն իրողութենէն, որ այս հարցին մէջ երեւանեան ընտրանքի հնարաւորութիւնները սահմանափակուած էին, խնդիրը պէտք է փորձել դիտարկել նախ անշուշտ «կարելիի արուեստը» տեսութեան սահմաններուն մէջ, ապա անկէ բխելիք իրավիճակի ընդհանուր գնահատականը փորձել կատարել:

Այսպէս. տակաւին պարզ չէ, որ այլ ԵՏՄ-ի անդամ երկրի հետ հասարակաց սահման չունեցող Հայաստանի Հանրապետութիւնը ի՞նչ տեսակի խնդիրներ կրնայ ունենալ ոչ ԵՏՄ-ական դրացիներու եւ ցամաքային ճամբով՝ անոնց միջոցով միւս ԵՏՄ-ական երկիրներու հետ առեւտուր զարգացնելու ընթացքին: Այստեղ ուղղութիւնները ունին որոշ տարբերութիւն: Մինչ Վրաստանի վրայով Հայաստանի Հանրապետութիւնը կը կապուի ԵՏՄ-ական Ռուսիոյ, Իրանի պարագային հանգրուանային այդ հանգամանքը գոյութիւն չունի: Առեւտրային յարաբերութիւնը պէտք է քննել ԵՏՄ-Իրան գիծին վրայ եւ փորձել իմանալ, թէ այնտեղ ի՞նչ տեսակի խոչընդոտներ կրնան յայտնուիլ:

Կայ հնչող տրամաբանական տեսակէտ, որ ԵՏՄ-ի առիծի դիրքը գրաւած Ռուսիոյ հետ Հայաստանի Հանրապետութիւնը ունի ազատ առեւտուրի գօտի ստեղծելու պայմանագրութիւն եւ Հայաստանի Հանրապետութեան անդամակցութիւնը ԵՏՄ-ին ի՞նչ կ'աւելցնէ գործնապէս: Գէթ Հայաստանի Հանրապետութիւն – Ռուսիոյ դաշնութիւն առեւտրային յարաբերութիւններուն վրայ:

Այս բոլորը հարցադրումներ են, որոնք կը յստականան ժամանակի ընթացքին: Յիշենք նաեւ բացարձակ հաստատումը այն մասին, որ ԵՏՄ-ն մեռած կառոյց է չծնած արդէն եւ պարզապէս քաղաքական առանցք ունի, իբրեւ Ռուսիոյ դաշնութեան ազդեցութեան գօտիի ընդարձակման հիմնական մեքանիզմ:

Հիմա փորձենք մտածումներ զարգացնել այլ ուղղութեամբ: «Թէ թէ»-ի կամ «եւ եւ»-ի տեսութիւնը կը թուի, որ չէ աշխատած: Երեւանը մինչեւ վիլնիսեան բանակցութիւններ անվերջ կը շեշտէր, որ երկու ուղղութիւններով ընթանալու իր քաղաքականութիւնը «կամ կամ»-ի մօտեցումին կը հակադրուի եւ որոշ առումով կը տեղադրուի փոխլրացման կամ բազմակողմ հաւասարակշիռ դիւանագիտութեան իրականացման քաղաքականութեան պարունակին մէջ: Վիլնիւսը իբրեւ կարեւոր դարձակէտ շրջեց այդ տեսութիւնը:

Վիլնիւսի շրջադարձը կամ բեկումնային պահը սակայն եւրոպական շրջանակներուն կողմէ մեկնաբանուեցաւ տարաբնոյթ ձեւով: Արեւելեան գործընկերութեան

ներգրաւուած քաղաքական գործիչները համեմատաբար կարծր դիրքորոշում ունէին Երեւանի առած քայլին նկատմամբ. կը համարէին, որ Երեւանը վերջնականապէս կատարած է իր ընտրանքը, ինչ որ կ'ենթադրէր, որ Եւրոպական Միութեան դռները փակուած են Երեւանի առջեւ: Ուրիշներ, յատկապէս Արեւմտեան Եւրոպայի պետական գործիչներ կը խօսէին այլ ձեւաչափերով Հայաստանի Հանրապետութեան հետ ընկերակցութեան նոր փաստաթուղթի մշակման հնարաւորութեան մասին: Նոր փաստաթուղթը պիտի կրէր ոչ տնտեսական բնոյթ եւ արծարծէր մարդկային իրաւանց, ժողովրդավարութեան եւ եւրոպական արժեհամակարգին հետ կապուած սկզբունքներ:

Այստեղ է, որ նիւթի ոստում կարելի է կատարել՝ նկատելու համար, որ Երեւանը ճիգ կը կատարէ «թէ թէ»-ի տեսութիւնը իրականացնելու: Եւրոպական արժեհամակարգի սկզբունքներու որդեգրումը օրէնքներու ամրակայումով կ'ըլլայ: Ամրագրուած օրէնքներու ամբողջութիւնը երկրի սահմանադրութիւնն է: Գուցէ աւելորդ չ'ըլլար մտածելը, որ սահմանադրութեան բարեփոխումը կը բխի նաեւ ա՛յս շարժառիթէն:

Կայ մեկնաբանութիւն, որ իշխանութիւններու ձեռնարկած սահմանադրական բարեփոխումները ոչ թէ համակարգային փոփոխութեան կ'առաջնորդեն, այլ նոյն համակարգին մէջ գործող հիմնական անձերու վերարտադրման կը միտին: Առանց մտնելու այս բանավէճին մէջ, պարզապէս կարելի չէ զանց առնել նաեւ «թէ թէ»-ի տեսութեան իրականացման քաղաքականութեան մէջ սահմանադրութեան բարեփոխում կատարելու որոշումը, մանաւանդ որ նման հարցերով զբաղող Վենետիկի յանձնաժողովը՝ իբրեւ եւրոպական կառոյց, բարեփոխման գաղափարին տուած է դրական գնահատական:

Նախագահականէն խորհրդարանական անցում կատարելու համակարգի փոփոխութիւնը միայն նախագահի լիազօրութիւններու սահմանափակում եւ պետական տարբեր կառոյցներու իրար հակակշռելու մեքենականութիւններու եւ օրէնքներու որդեգրում չէ: Երբ հրապարակուին իշխանութիւններուն կողմէ առաջադրուած սահմանադրական բարեփոխումներու յօդուածները, աւելի յստակ կը դառնայ, որ երկրորդ «թէ»-ի կիրարկման օգտի՞ն է առնուած այս քայլը եւ թէ յետ սահմանադրական բարեփոխման, Հայաստանի Հանրապետութեան առիթ կը տրուի՞ ստորագրելու Եւրոպական Միութեան հետ ընկերակցութեան յատուկ ձեւաչափով պատրաստուած փաստաթուղթը: Այս մէկը որոշ չափով կախեալ է ԵՏՄ-ն ղեկավարող բեւեռէն:

Եւ ի հարկէ հայկական կողմի հաստատակամութենէն՝ հետեւողական ըլլալու հաւասարակշռող քաղաքականութեան հետապնդման իր նախնական նպատակին մէջ:

«Ա.»

www.yerakouyn.com

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Քրտական Աղբիւր Մը ՏԱՀԵՇ-ի՝ Արաբունարէն Վտարումը Ժամերու Հարց Կը Նկատէ. Քրտական Ուժերը Նկատառելի Յառաջխաղացք Կ'արձանագրեն



Մինչ Արաբունարի մէջ Քրտական ժողովուրդի ուժերուն եւ ՏԱՀԵՇ-ի զինեալներուն միջեւ բախումները մուտք գործեցին իրենց երկրորդ ամիսը, հակառակ իրենց զինամթերքի պակասին, քիւրտ զինեալները հակայարձակումի դիմելով վերատիրացան քաղաքին մէջ հինգ թաղերու: Չորեքշաբթի գիշեր «Մայատին» հաղորդեց, որ քրտական աղբիւր մը յայտնած է, թէ քիւրտերը քանի մը ժամէն պիտի յայտարարեն, որ

ամբողջութեամբ վերատիրացած են Արաբունարին:

Ամերիկեան ղեկավարութեամբ դաշնակից ուժերու ուժաձիգները աշխուժացուցին հարուածները քաղաքին մօտ գտնուող ՏԱՀԵՇ-ի դիրքերուն դէմ, որոնց դէմ 11 յարձակումներ գործեցին: Ամերիկեան բանակէն աղբիւրներ հաղորդեցին, որ օդային հարուածները քաղաքին մերձակայ շրջաններուն մէջ ՏԱՀԵՇ-ի յառաջդիմութիւնը դանդաղեցուցած են: Փենթակոն Իրաքի եւ Սուրիոյ մէջ արշաւը կոչեց «Ամբողջական վճռակամութիւն»: Արաբունարի տեղական կառավարման մարմինի անդամ Իտրիս Նահսան «Մայատին»-ին յայտնեց, որ օդային հարուածները իրենց ազդուութիւնը ցոյց տուած են՝ աւելցնելով. «Եթէ օդային յաւելեալ աջակցութիւն ըլլայ, քիւրտերը պիտի կարենան Արաբունարը ամբողջովին ազատագրել»:

Մարդկային իրաւանց սուրիական դիտարանը յայտարարեց, որ Արաբունարի բախումներուն ընթացքին ՏԱՀԵՇ-ի 374 զինեալներ սպաննուած են, Քրտական պաշտպանութեան ուժերէն՝ 258, 9 այլ քիւրտեր եւ 20 քիւրտ քաղաքայիններ: Դիտարանը աւելցուց, որ այս թիւերուն մէջ չեն ներառուած օդային հարուածներուն պատճառով արձանագրուած զոհերը:

Դիւանագիտական աղբիւրներ լիբանանեան «Ժումհուրիա» օրաթերթին յայտնեցին, որ Թուրքիա Սուրիական ազատ բանակէն ուժերու ստիպած է քիւրտերու կողքին կռիւի դիրքերէն հեռանալու դէպի թրքական հողեր եւ բախումներու բեռը ձգելու քիւրտերուն ուսերուն, ապա այս բոլորէն ետք ուժակոծած է թրքական հողերուն վրայ գտնուող քրտական այն դիրքերը, որոնք կ'օժանդակեն Արաբունարի բնակիչներուն:

Երէկ գիշեր Փենթակոն յայտարարեց, որ ՏԱՀԵՇ-ի դէմ միջազգային դաշինքին մասնակցութեան հարցով թուրքերու հետ դրական բանակցութիւններ տեղի ունեցած են: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը իր կարգին յայտարարեց, որ պատրաստակամ է Սուրիոյ մէջ ապահովական գօտի մը ստեղծելու հարցը Թուրքիոյ հետ քննարկելու, սակայն այդպիսի գօտիի մը ստեղծումը ներկայիս իրենց համար նպատակ մը չէ:

Նշենք, որ ամերիկեան ուժաձիգները Չորեքշաբթի օր Հասաքէի հարաւը գտնուող Շատտաստէ գիւղին շուրջ ՏԱՀԵՇ-ի դիրքերուն դէմ 7 յարձակում գործեցին:

Հէկըլը. «Ամերիկեան Բանակն Ու Ռուսական Հզօր Բանակը Պիտի Ստիպուի Ահաբեկիչներուն Դէմ Դնելու»



Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Չաք Հէկըլը յայտարարեց. «Ամերիկեան բանակը պիտի ստիպուի ահաբեկիչներուն դէմ դնելու, նոյն ստիպողութեան առջեւ պիտի գտնուի նաեւ հզօր, ազդու եւ ՕԹԱՆ-ի շեմին կանգնած ռուսական բանակը»:

Ան նշեց, որ ապագային ամերիկեան բանակին առջեւ ծառացած մարտահրաւերները պիտի շատնան, եւ աւելի տարատեսակ ու դժուար դառնան: «Ահաբեկիչներու եւ զինեալներու

վտանգը երկարատեւ ժամկետով պիտի շարունակուի», ըսաւ Փենթակոննի ղեկավարը:

Հէկըլը ըսաւ, որ ամերիկեան բանակը Միացեալ Նահանգներու ապահովութիւնը կ'երաշխաւորէ, ինչ որ ակնբերէ է Արեւմտեան Ափրիկէի մէջ, ուր ամերիկացի զինուորներ կը փորձեն իպոլա ժահրի տարածումը կանգնեցնել, ինչպէս նաեւ Լեհաստանի եւ Պալթեան երկիրներուն մէջ, ուր ամերիկացի զինուորները կ'աջակցին ՕԹԱՆ-ի ուժերուն՝ ընդդէմ ռուսական նախայարձակումին: Ան նշեց, որ այդ մէկը ակնբերէ է նաեւ Իրաքի մէջ, ուր ամերիկացիք ՏԱՀԵՇ-ի ահաբեկիչներուն դէմ կը դնեն:

«Ամերիկացի զինուորները աշխարհի տարածքին 150 շրջաններու մէջ կը ծառայեն», ըսաւ ան:

Բրիտանիոյ Խորհրդարանը Որդեգրեց Պաղեստինեան Պետութիւնը Ճանչցող Ոչ Պարտադիր Որոշումը

Բրիտանիոյ խորհրդարանը 274 թեր եւ 12 դէմ քուէներով որդեգրեց բրիտանական կառավարութեան համար ոչ պարտադիր որոշում մը, որ Իսրայէլի կողքին գոյութիւն ունեցող պաղեստինեան պետութիւն մը կը ճանչնայ՝ նպաստելու համար բանակցուած լուծումին, որ պիտի ամրացնէ պաղեստինեալներու տագնապի երկու պետութեան հիմամբ լուծումը:

Նշեալ քուէարկութիւնը անմիջական փոփոխութիւն մը պիտի չյառաջացնէ եւ միայն խորհրդանշական միջոցառում մըն է, որ Բրիտանիոյ կառավարութեան չի պարտադրեր անոր հետեւիլ:



Պաղեստինի արտաքին գործոց նախարար Ռիատ Մալիքի յայտնեց, որ իրենք կը սպասեն, որ բրիտանական կառավարութիւնը յարգէ խորհրդարանին որոշումը՝ նոյնիսկ եթէ

ատիկա պարտադիր չէ, եւ Պաղեստինի պետութիւնը ճանչնալու իր մտադրութիւնը անմիջապէս յայտարարել: Ան այդ որոշումը նկատեց «քաջարի»՝ նկատի ունենալով անցնող օրերուն խորհրդարանին վրայ բանեցուած ճնշումները:

Իսրայէլի մէջ Բրիտանիոյ դեսպան Մեթիու Կոլտ իսրայէլեան ձայնասփիւռի կայանին յայտնեց. «Այս քայլը ցոյց կու տայ, որ բրիտանական հանրային կարծիքին մօտ փոփոխութիւն տեղի ունեցած է» եւ այդ իրողութեան հետ հաշուի նստելու համար Իսրայէլ պէտք է դադրեցնէ բնակեցման վայրերու կառուցումն ու ընդլայնումը եւ նպաստէ Կազայի վերաշինութեան:

Իսրայէլի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց. «Պաղեստինի պետութիւնը խորհրդանշաբար ճանչնալու բրիտանական խորհրդարանի քայլը խաղաղութեան առիթները կ'արգելակէ»: Նախարարութիւնը ճանաչումը «իր ատենէն կանուխ» նկատեց եւ «պաղեստինցի ղեկավարներուն ուղղուած մտահոգիչ պատգամ մը, թէ կրնան երկու կողմերուն պարտադիր դժուար ընտրանքները շրջանցել, ինչ որ կը խանգարէ իսկական խաղաղութեան իրագործման առիթները»:

Իսրայէլեան ընդդիմութեան ղեկավար Իցհաք Հերցոկ իսրայէլեան պատկերասփիւռի 2-րդ կայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին քուէարկութեան արդիւնքը Իսրայէլի վարչապետին, արտաքին գործոց նախարարին եւ ամբողջ նախարարաց խորհուրդին «մէկ յաւելեալ ձախողութիւնը» նկատեց:

Ռուսիոյ Եւ Ազրպէյճանի Պաշտպանութեան Նախարարները Քննարկած Են Միացեալ Ռազմափորձեր Կատարելու Հարցը



Ազրպէյճանական kontakt.az կայքը կը հաղորդէ, որ Ռուսիոյ եւ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարները երկուշաբթի օր Պաքուի մէջ կատարեցին բանակցութիւններ, որոնց իբրեւ արդիւնք ստորագրուած է 2015-ի համագործակցութեան ծրագիրը:

Հանդիպումին սկիզբը Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերկէյ Շոյկու ըսած է, որ պիտի քննարկեն զինուորական-արհեստագիտական համագործակցութեան առնչուող «լուրջ հարցեր», ինչպէս նաեւ

շրջանային խնդիրներ:

Այդպիսի հարցերու շարքին Շոյկու նշած է Կասպից ծովուն մէջ միացեալ ռազմափորձերու կայացման, զինուորականներու պատրաստման եւ շրջանային անվտանգութեան ապահովման հարցերը:

Պաշտպանութեան նախարարութեան մէջ հանդիպումին ւարտէն ետք Շոյկու հանդիպում ունեցած է նաեւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

«Սուրբ Ներսէս Շնորհալի» Պատուոյ Շքանշան՝ Իրաւաբան Արսէն Դանիէլեանի

12 հոկտեմբերին առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր տաճարին մէջ, մատուցուեցաւ Ս. պատարագ , որուն ընթացքին Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեան կարդաց Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսին կոնդակը, ըստ որուն, ան «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ շքանշանով կը պարգևատրէր հանրաժանօթ իրաւաբան Արսէն Դանիէլեանը՝ առ ի գնահատանք Հայց. եկեղեցոյ եւ Արեւմտեան թեմին մատուցած իր նուիրեալ ծառայութեան:



Որպէս ցկեանս խնամակալ Արեւմտեան թեմի Խնամակալութեան ծրագիրին՝ Դանիէլեան իշխանավայել նուիրատուութիւն կատարած է եւ գանազան առիթներով եւս կը մասնակցի նուիրատուութիւններով:

Նկատի ունենալով իր պատրաստակամ ծառայասիրութեան ոգին՝ առաջնորդը զինք նշանակած է իր կողմէ հաստատուած «Հաւատքի դեսպաններ» յանձնախումբի ատենապետ:

Դանիէլեան երկար տարիներէ ի վեր անսակարկ եւ բազմակողմանի ծառայութիւն մատուցած է Հայց. առաքելական եկեղեցոյ:

Յարութիւն Անմահունիի Պարգևատրում



Վերջերս Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ «Ութուճեան» սրահին մէջ , Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէրան Օհանեանի կողմէ տրուած համապատասխան հրամանագիրով, «Մարշալ Բաղրամեան» գերատեսչական մետալով պարգևատրուեցաւ Կիպրոսի սկաուտական շարժման յայտնի գործիչ, աւագ արիապետ Յարութիւն Անմահունի, առ ի գնահատանք Հայաստանի զինուած՝ ուժերուն համար դրսևերած նախաձեռնութիւններուն:

Անցեալին եւս Հայաստանի զինուած ուժերուն տրամադրած մեծ նուիրատուութեան առ ի գնահատանք, ան պարգևատրուած է «Անդրանիկ Օզանեան» մետալով:

Այս տարի պիտի նշուի բարերարի 80-ամեայ արիական յոբելեանը:

Ելոյթներ ունեցան կարգ մը ներկայացուցիչներ: Ապա շնորհակալական խօսք արտասանեց պարգևատրեալը, որ հաստատեց, թէ հետագային եւս պիտի շարունակէ իր ազգանուէր նախաձեռնութիւնները:

www.aztagdaily.com


Հալեայի Մէջ Նշուեցաւ Սրբոց Թարգմանչաց Տօնը



Շաբաթ, 11 հոկտեմբեր 2014-ի առաւօտեան Հալեայի «Գեորգ Եսայեան» սրահին մէջ նշուեցաւ ազգային եւ եկեղեցական Սրբոց Թարգմանչաց տօնը՝ Բերիոյ Հայոց Թեմի հոգեւոր դասուն, Ազգային վարչութեան, Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի, Ազգային Սահակեան, Զաւարեան, Կիւլպէնկեան եւ Հայկազեան վարժարաններու աշակերտութեան, տնօրէնութեանց եւ ուսուցչական կազմի

ներկայութեան: Այս առթիւ մատուցուեցաւ Սուրբ եւ անմահ պատարագ, մասնակցութեամբ՝ Մ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրաց դասին, խմբավարութեամբ՝ Գեորգ Գատեհճեանի: Զարեհ քինյ. Շաքարեանի կողմէ օրուան պատգամը փոխանցեց առաջնորդի օգնական՝ Վահան Ծ. վ. Պերպերեան: Պատարագի ասարտին աշակերտները ներկայացուցին գեղարուեստական յայտագիր: Հանդիսութիւնը փակուեցաւ «Կիլիկիա» երգով եւ «Պահպանիչ» աղօթքով:

Աշխարհահռչակ Գիտնականներ Օրբելի Եղբայրներուն Նուիրուած Յուշ-Երեկոն



4 հոկտեմբերին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ յուշ երեկոյ՝ նուիրուած Ռուբէն, Լեւոն եւ Յովսէփ Օրբելի եղբայրներուն:

Օրուան բանախօսներն էին Ծաղկաձորի տուն թանգարանի տնօրէն Մարինէ Բունիաթեանի եւ ասագ գիտաշխատող Գերասիմ Մկրտիչեան:

Անոնք ներկայացուցին Օրբելի երեք եղբայրներուն կեանքը եւ ունեցած գործունէութիւնները:

Իրենց գործունէութիւնը նուիրելով գիտնական եղբայրներու հսկայ աշխատանքին՝ Բունիաթեան-Մկրտիչեան ամուլը 35 տարիներու ընթացքին հաւաքած եւ 300 հազարի հասցուցած է Օրբելի եղբայրներու անձնական նիւթերը, քայլ առ քայլ ուսումնասիրելով եւ ամրագրելով գիտական աշխատանքներու պատճէնները, նամակները, յուշերը, եւ ներկայիս տուն-թանգարանը դարձուցած է գիտահետազօտական բաժիններով հաստատութիւն:

Ձեռնարկի ընթացքին ցուցադրուեցան «Օրբելի եղբայրներու թանգարան» եւ «Օրբելիներու կող» ֆիլմերը, ուր ներկայացուած էին Ռուբէն, Լեւոն եւ Յովսէփ Օրբելի եղբայրներու մեծութիւնը եւ անջնջելի դրոշմը համաշխարհային գիտութեան մէջ:

www.radioayk.com

ԿՆՈՋԱԿԱՆ

Մեծ Պողոտաներու Մօտ Ապրող Կիները Կը Տառապին...

«Տելլի մէյլ»-ի մէջ լոյս տեսած յօդուածի մը համաձայն մեծ պողոտաներէն մինչեւ 100 մէթր հեռաւորութեան վրայ ապրող կիներ 22 տոկոսով աւելի ենթակայ են արեան գերձնշումի, քան՝ աւելի հեռու ապրողները:

Արդարեւ, ամերիկացի գիտնականները առայժմ պատասխան չունին այն հարցումին, թէ պողոտային մօտ ըլլալով, յատկապէս ի՞նչն է, որ վտանգաւոր է, արդեօք ապականած օ՞դը, աղմո՞ւկը, թէ՞ երկուքը միասին:

Տուրմին Վերագրուող 10 Յատկութիւն

1-Տուրմը օգտակար է սրտին: Անոնք, որոնք պարբերաբար տուրմ կ'ուտեն 37 առ հարիւրով կը կրճատեն սրտանօթային հիւանդութիւնները:

2-Տուրմը կը բարձրացնէ տրամադրութիւնը:

3-10 տարի շարունակ, օրական 63 կր. տուրմ ուտող տղամարդիկ 17 առ հարիւրով կը կրճատեն սրտի կաթուածի հաւանականութիւնը:

4-Իտալացի գիտնականներ փաստած են, որ այն մարդիկ, որոնք շատ տուրմ կ'ուտեն, ծերութեան հազուադէպօրէն կը տառապին սակաւամտութենէ:

5-Տուրմը կը չափաւորէ անօթութեան զգացումը: Բաւարար է 10 կր. սեւ տուրմ ուտել, որպէսզի անօթութիւնը անցնի:

6-Նոյնիսկ քիչ քանակութեամբ տուրմ ուտելով մարդիկ աւելի դիւրին կը լուծեն թուաբանական խնդիրներ. ասիկա ապացուցած են բրիտանացի գիտնականներ:

7-Մէկ բաժակ տաք տուրմ խմելով կը հանգստացնենք կոկորդը եւ կը չեզոքացնենք հազի *ռեֆլէքսը*:

8-Այն երկիրները, ուր շատ տուրմ կը սպառի՝ աւելի շատ նոպլէեան մրցանակակիրներ կան:

9-Տուրմը կը նպաստէ երկարակեցութեան: Տուրմի պարբերաբար օգտագործումը կրնայ աւելցնել կեանքի տարիները:

10-Սեւ տուրմը կը դանդաղեցնէ մորթին ծերութիւնը:





ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ՝
Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանի

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ՆՈՐՕՐԵԱՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝
Դոկտ. Արտա Պոյնէրեան-Ճէպէճեանի
Բժ. Ժան Պէպէճեանի
Բժ. Մանուկ Մանուկեանի

ՀՄԸՄ-Ի, Շրջանաւարտից Միութեան և ՀՅԴ ՔԵՄ-Ի Ներկայացուցիչներուն

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 22 Հոկտեմբեր 2014-ին, երեկոյեան
ժամը 8:30-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ

Բոլորդ սիրով հրաւիրուած էք

ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ